

«երեւելի այր մի աշխարհական», բողոքելու Նիկողայոս Թորոսովիչի արարքներուն դէմ: Բողոքագիրը, զոր ներկայացուց պատգամաւորութիւնս Կաթողիկոսին, թուական կը կրէ 25 Յուլիս 1631. անոր բովանդակութիւնը քաղուածաբար եւ լեհերէն թարգմանութեամբ յառաջ բերած է F. Sachariasewicz ²² եւ անկէ՝ հայերէն թարգմանութեամբ Կ. Եղեան ²³: Կաթողիկոսը համարիմ եւ ես զետեղել այս բողոքագիրը այս տեղ ըստ Եղեանի թարգմանութեան.

«... Կաթողիկ եկեղեցականքն Լատինացւոց եւ ոստիկանք քաղաքին Իլլովայ ջաղխեցին զփականս եւ զծխնիս եկեղեցւոյն եւ ի ներքս մուծին զանիծեալն — լաւ էր եթէ կլեալ էր զմեզ երկիր քան եթէ տեսանէաք զպղծութիւն այնպիսի: Չեպիսկոպոսն ոչ միայն եհան ի մէնջ, ի հարազատ որդւոցս Հայաստանեայց եկեղեցւոյ, համօրէն զեկեղեցիս, որով խափանեաց զկարգս աստուածպաշտութեան, այլ եւ չտայ իսկ թոյլ թաղել զմեռեալս: Ունի նա զքահանայս մեր, որ հաւատարիմքն իցեն օրինաց մերոց եւ ոչ կամեցինն հնազանդիլ իշխանութեան նորա, զան հարկանէ զնոսա եւ կապեալս արկանէ ի բանտ եւ ոչ արձակէ՝ մինչեւ դարձցին եւ ընկալցին զԼատինացւոցն զհաւատս: Եւ ոչ ոք է, որ պատժիցէ զնա. քանզի համօրէն իշխանաւորք աշխարհայինք եւ եկեղեցականք ի կողմն նորա

²² Wiadomość o Ormianach w Polsce, Lwów 1842, էջ 42—52:

²³ Բռնի միութիւն, էջ Իէ—ԻԸ: